

վերանանու եղևնափայտներուն վրայ :
 « Ա՛րդ՝ եթէ արեգակը, որ միայն
 տիրարնչան մ' է ամենակարող Արարչին,
 այս տիեզերական ազդեցութիւնը կը
 յէ, ինչպէս յաւիտենական սէրը և
 առաւածային վերին կարողութիւնը
 չը պիտի ընէ աւելի մեծամեծ բարեք
 ներս :

« () ննէ նոյնպէս միտքդ՝ որ կենդանի
 է և կը խորհի բաւ ներսիցեղ : Ս'ի և
 նոյն մտքով միթէ չէ՞ս ըմբռններ ինչ
 պէս ամենափոքր առարկաները նոյն
 պէս ամենամեծերը, ինչպէս ամենա
 հեռաւորները, նոյնպէս ամենամերձաւ
 քարները, ինչպէս անցեալ փորձերը՝
 նոյնպէս ապրուսի նախատեսութիւն
 ներք, ինչպէս երկնակամարի վրայ ե
 զած ըւսաւոր գաւնդերը, նոյնպէս
 փաշի մէջ սողացող զեռուներ : Այժմ
 մարգկային միտքը՝ առտուածային ըւ
 սոյ մէկ կայծ մը ըլլալով, այս հրա
 շակ կարողութիւնն ունի, միթէ զար
 մանանայի է որ յաւիտենական և ա
 ռաջին լոյսը աւելի մեծամեծ հրաշք
 ներ գործէ ր :

Թէ՛հաջրոն այսպէս խօսելով՝ լռեց
 և կորեկից գթութեամբ մը իւր ա
 շակերտին նայեցաւ : Յետոյ կրկնեց
 « Սիրելի Քօթթարտ, միթէ դժուա
 ըն է քեզ հաւատալ, որ Աստուած,
 որ մեր գլխու մտքերը հաշուած է,
 կարող է հոգալ քու կենացդ համար
 և ուղղել քո ընթացքդ 'ի բարին ո :
 Արիսաարդը, ամշտալով որ Աստու
 ծոյ նախախնամութեանը վրայ կաս
 կամ ունէր, խորին յուզմամբ մը պա
 քախտանեց, « Ա՛յո, պո, կը հաւա
 տամ ես, օգնէ Աստուած իմ և Տէր,
 օգնէ իմ անհաւատութեանս, որ այ
 սուհետեւ 'ի բոլոր սրտէ հաւատամ և
 պաշտեմ զքեզ ո :

Իմարդ. Գաղ: Իււալպարտ Ա.
 Կալենդեմայ աչ. դեղարանին վանդ
 Արեւոյ Յախլեմայ :

ԿԱՐՃ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ
 ՅԱՍՈՐԻՍ

1866 Հոկտեմբեր 16 կիւրակէ օրը
 սրբոյ Աթոռոյս վերաբերեալ՝ փոքր
 բայց կարեւոր պաշտօնիւ մեկնեցանք
 սուրբ Արուսազեմէն և հանդիպելով
 Սեմէյու Անուց՝ Յոպպէյու Ան
 քը հասանք : Գաղղից Սիսաթի ընկե
 բութեան շոգեհաւը Յոպպէյու դի
 մաց իւր խորտխին վրայ կը սպասէր :
 և միտեգամայն պատրաստ էր զմեզ
 ընդունելու : Արեւոյեան երկաթը առ
 ներով յամող նաւարկութեամբ՝ ա
 ռաւօրը կանուխ Պերութի դիմաց
 խարսիեց : Այս տեղ չեմ՝ ուզեր յի
 շել մաքրանոցին (քարանթինայի) մէջ
 քաշուած նեղութիւնները, որ դրժ
 բաղդ ճամբորդաց կը պատահի : Պե
 ռութ, ըստ հնոց Պերթիթոս կամ Ա
 ըրիսան ձայնեալ, բարեշէն և անուանի
 քաղաք Փիւնիկեցւոց, որ առաջին
 դարերուն մէջ իրենց վաճառակա
 նութեամբը աւելի ծաղկեցուցեր
 էին, չեթէ միայն այս, այլ բոլոր այն
 քաղաքները որոնք իրենց իշխանու
 թեան ստակ կը գտնուէին, թէպէտ
 այժմ ևս քաղաքս առաջինէն աւելի
 քեզիցիկ և բարեկարգ կը տեսնուի իւր
 նորանոր և հոյակապ շինութիւննե
 ըսլը և ընդարձակ ու յարգաբուն փռ
 զոցներովը : Հին քաղաքը պարսպա
 պատ է որոնք տակաւին կ'երեւին :
 բայց այժմ՝ քաղաքին դիրքը, ընդար
 ձակ բլրակներու վրայ տարածելով,
 հին պարսպաքն խափանեալ են և շատ
 տեղերը կը քակին : Օպիկերքէն կե
 բեւի հին բերդը՝ ի վաճառականութի
 ծաղկած է Արուսացւոց հետ, ու գրե
 թէ Ասորոց առաջին նաւահանգիստն
 է : Ինակիչք խառն են, Տաճիկք, Յայնք
 Սառնիթք, Հոսովմէական Յոյնք, ո
 բոնց շատերը 1860 թուին իրենց մայր

րիսր եպիսկոպոսն ծոցը դարձան և կան
և Ամերիկացի բուրժուականք. երեւելի
են հնչակաց եկեղեցիքն Աստիւաց և
Քուստոց, ժողովարանն բուրժուականաց,
ժողոված է ուսումնականութիւն յաճա-
խութիւն ուսումնարանաց և տպարանաց,
որք զանազան կարմիրեն ուսմանք սար-
վելու աստ կը փութան ։ Նոսի արքե-
պիսկոպոս Յոււնաց և իւրաքանչիւր քը-
րխոսնեաց ազգաց տեսուչներ ։ Հասա-
րակ լեզուն Արարացոց է ։ բայց կը
խօսին յունարեն Վաղղիերեն և Վոսյե-
րեն երբեմն ։ Կայ նաեւ փոքրիկ վանք մի
Ագգիս Հայոց ասոր ։ Ղշան անուամբ ։
1851 Թուին արքայ Աթուոս ի գնաց
առեալ յաւուրս Յովհաննէս Պատ-
րիարքի Օմիւսնացոյ, որոյ տեսչու-
թիւնն արքայ Աթուոս կառավարու-
թեան կը վերաբերի, և տեսալ չ վար-
դապետ մի կը նստի զգտնուած պան-
դուխտ հայագիր ժողովուրդը հոգե-
ւորապէս մխիթարելու համար ։ Օգը
և կրնայն բարեխառն է ։

Պերութ քաղաքէն ամոյս 29 ին
մեկնեցանք շոգեմուտ և հասանք ի
Աւաղիկէ, թարապուրուտի նուա-
հանդիսոր միայն հանդիպելով ։ Ի ծու-
վեղին կան քանի մի տունք մթե-
րանոց և կրպակք, մարսառուն և ալ ե-
րակ բերդն, որոյ մէկ յետը ծոյուն մեջն
է ։ Բուն Աւաղիկէ քաղաքն ընդար-
ձակ դաշտի մը վրայ անբաժուած է ։ ո-
րուն մէջ կը տեսնուի հնութիւն նշխար-
ներ, ոմանք կանգուն և ոմանք հողա-
կայտերու տակ, ինչպէս է յաղթու թե-
կամարը, որուն վերայ քանդակուած կը
տեսնուի հին սողաւարտի, պրահի,
ժահանի, Նիզակի և այլ նիպարներ ։ և
ուրիշ տեղ մը քանի մի մեծամեծ եր-
կար քարեր, իրարու վերայ շարուած,
որոնց վերայ կը գտնուի մանր ծաղիկեաց
պատկի և տրմաւենիի քանդակներ,
և շատ մի կրանիտ և պորփրաքի տեսնոց

կտորակներ և աքաղաղներ ։ որոնց
շատերը կրպակաց և տանց պատերուն
մէջ կանգուն կան և մնացածները փը-
լտակներուն մէջ կերելին ։ Հնու-
թեան նշխարները կերելն նաև Հէխ
Խորահիմ կուսած հողաբլուրին վրայ,
որ այժմ ձիթենի ծառատունկով ծած-
կուած է ։ Տեղոյն բնակիչք կրեն
թէ հին քաղաքին տեղն աստ է, զոր
Հռովմայեցիք կործաներեն և ցարգայն
հնութեց բեկորները աւերակաց մէջ
կերելին ։ Կստ է Հէխ Խորահիմ կու-
սած երեւելի մկիթն Տաճկաց ։ որ
իւր և աշակերտին գերեզմանը մկիթ
թին մէջն է, և է այժմ երեւելի
ուխտատեղի Տաճկաց, Կան հին եկե-
ղեցիք, որոնք ի մկիթ փոխարկեալ են
գամանի և երեւելի հնութիւնք, զորս
ժողովեալ են Վարապական տէրու-
թեանց հրապատար, զոր որինուկ, սպե-
տակ մարմարինն արձաններ և երե-
ւելի քանդակներ, հին պորփրաքի և
կճեաց բեկորներեաց տեսակ հնութի-
ւնք, զոր օրրստօրէ կը հաւաքեն, որոնք
կենդանի վրայ են քաղաքի նախնի
հարստութեան և շխտութեան ։ Բնա-
կիչք են Տաճիկք, Յայնք, Մարմիթք և
Հայք ստեղծութիւն ։ Տաճիկք ունին ե-
րեւելի մկիթներ, և մասնաւոր զըպ-
րոցներ, ջերմ են ի կրուն իւրանց,
և բաղնաթիւն են քան զՄիստանեայտ ։
Յայնք ունին քանի մի եկեղեցի և եպիս-
կոպոսարան ։ Երեւելի է ուսումնարանն
այջկանց զոր ջանիւք եպիսկոպոսին հիմ-
նեալ և բարեկարգեալ է երեք լեզուաց
գասախառութեամբ, այն է Յունա-
րեն, Վաղղիերեն և Արաբերեն, և
աշակերտք առ հասարակ 100 էն աւե-
լի ։ Տեսանք անդ յեկեղեցին Յունաց
հին երկաթափր, յունական գրով
գրչափր, աճեւտարան մի մեծագիր,
որ եպիսկոպոսք անդոյն յաջորգա-
բար իրենց ստորագրութեամբ անոց

հնու թիւնը վաւերացուցեր են, որ ճիշտ թուականը անայտ է : Հայք կարի սակուաթիւ են այժմ, թէպէտ ի պատմութիւնս և ի յիշատակարանս քրոյ ասի լինել երբեմն ի լաւորիկէ եկեղեցի և ժողովուրդ, և առաջնորդ եպիսկոպոս, ինչպէս որ Հռոմկայ քումարուած եպիսկոպոսաց կարգին մէջ կը յիշուի Սարգիս եպիսկոպոս ի լաւորիկէաց. այլ այժմ այդ հնու թիւնները բարբոտլին անհետացեալ երեւին. միայն քանի մի առն Հայք և սուրբ Երուսաղէմի հոգեւորուն, զոր հաստատեալ են 114 տարի յառաջ Պատրիարքունք և միաբանք իրենց յոգնածան աշխատութեամբը : Հոգեւորուն բաւական ընդարձակ է, 12 քարուկիր և կրկնայարկ սենեակներէ բաղկացեալ, ընդարձակ պարտէզով, և փայրիկ եկեղեցին յանուն սուրբ Լստուածածնի օծեալ է, որուն յիշատակարանը ահաւասիկ մեր ընթերցողաց կը ներկայացնեմք : « Լստուածով և յորգորմամբ սուրբ Երուսաղէմի Պատրիարք տեառն ի՞նչողորոսի ճգնազգեաց վարդապետի, այս հոգեւորուն արար յիշատակ իւր արհեստի վաստակէն վասն հոգւոյ իւրոյ և ծնողաց հոգւոյն, որ է ծննդեամբ Հալէպցի և սննդեամբ Պօլսեցի, արհեստիւ Սէտէֆճի (Յակոբ ամուսնոյ կոչեցեալ, սուրբ Յակոբի այ միաբան, և վայելողք ասացէք Լստուած ողորմի, ամէն. ի թուին իբձդ. ռաէն ո : Սուրբ նի նաեւ եկեղեցին սեփական կառուած՝ քանի մի առն և կրպակք, որ արդեամբք սրբոյ Լթուոյս սուրբեր են նախնիք, որոնց մէկուն արձանագրութիւն դարձեալ աստ կը գնեմք : « Ի Պատրիարքութեան տեառն Յովակիմաց զիտապետի, այս հոգեւորուն դրան մերձ եղեալ զոր ի ներ հոգեւորուն մտեալ է, վերջն առեցեալ եղև

արդեամբ Խուսճու խոյի մահտեսի Գէորգին վասն իւր ծնողացն և որդւոյն Յովհաննէսին և հասայն ննջեցելոց հոգւոյն յիշատակ է, թուին իմ ո : Եղնպէս այս հոգեւորան տեսչութիւնը ի սկզբանէ անտի սրբոյ Լթուոյս կառավարութեան կը վերաբերի, որ այժմ Սարգսարացի սուրբ վանուցս միաբան Լթանապատիւ Օսքարիա վարդապետին յանձնուած է հոգեւորան և կարուածոց տեսչութիւնը, և ժողովողաց եկեղեցական խորհրդոց մաստակարարութիւնը, որ շրտ տարիէ ի վեր իւր պաշտօնը արթնութեամբ կը կատարէ : Վաճառականութեամբն չէ այնքան ծաղկեալ, վասն որոյ բնակիչք տեղւոյն աղքատ են. բերք երկրին չէ այնքան աւատ, ունի պարտէզս շուրջանակի, յորում գտանին մրգեղէնք՝ կիտրոն և նարինջ. բերք աւատ ցորեան, գարի, շուշմայ (սուսամ), և ձէթ. դարմանեն զձիթեւնիս ի գիւղորոյս, բամբակ, բուրդ :

Սնացածը յարդր խոտով :

ՀԱՐՏԻԱՆՏԻ ԱԿԵՍՐԿ

ԱՐՏԻՆԵԼԵԱՆ ՀԱՐՏՈՍՈՒԹԵԱՆ ՎՐԱՅԻ

Որչափ մարդկային մտաւոր յառաջադիմութեան հորիզոնը կընդարձակի, այնչափ երկրագունեաւ նորանոր երեւոյթներու տեսարան կը դառնայ : Ի կողմէն քիմիագիտութիւնը և բուսագիտութիւնը նորանոր գիւտերով բուսութեան ոյժը մարդկային հանձարոյն և գործունէութեանը աջակից կ'առնեն և մինչև ներկայ դարս գտնուած շատ խոլոնդոսներ կը հարթեն յառաջադիմութեան առջև, իսկ միւս կողմէն հնախուզութիւնը բազմադարեան փրատակներու և աւերակներու մէջէն